Ը. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 19 ՄԱՐՏ 1905 ԹԻՒ 698

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկիսն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լլլայ։

—o—

Վաճառքի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ (Bulgarie) Varna

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԵՒ ԷԴՈՒԱՐԴԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

«Նա, ով ընկնում է ազատութեան համար մղած կռուում, նա չէ մեռնում. Նրան ափսոսում են երկինք ու գետինք՝ գաղանն ու բնութիւն. եւ երգիչները նրա մասին երգեր են երգում:

«Ցորեկը Նրան սաւերում է արծիւը, գայլը վէրքերը լիզում. իսկ գլխի վերեւում բազէն-կարիչ թռչունը իր ընկեր ոգուի մասին խոկում։

Wr. Roshov

Երեկոյ է. ադամամութը սկսում է տիրապետել փոքրիկ բայց ազատ Վիտոշին։ Կատարից մոտիկ, լանջի վրայ, ձորակի եզրից մի երկու քայլ հեռու հինաւուրց հսկայ, բայց անազատ Մասիսի երկու տարագիր զաւակներ։ Մին ալեւոր, միւսը դեռատիպ ուզում են փորձել դժոխային մեքենան որ թոյլերին միջոց է տալիս զօրեղ բռնակալներին զօրեղ հարուածներ հասցնել։

Փոքրիկ Վիտոշը սիրով է հիւր ընկալել իր երէց, անազատ հրսկայ եղբօր զաւակներին, որոնք անկարող են իրենց հարազատ լերան արդավազդակուլ անգունդներում փորձել իրենց ձեռքն ընկած աւերիչ գործիքը։

Գործը վտանգաւոր է. ալեխառն և դեռափթիթ, դժբաղդ երկրի դժբախտ լաճերը մըրցում են, վիճում են վտանգը իրենց ուսերէ իրարու ձեռքից. յաղթանակը տանում է դեռափթիթը, բայց ալեւորն էլ շատ չէ հեռանում. նա չէ ուզում հեռու լինել վտանգից, կարծես հսկել ուզելով դեռափթիթ ճէտին, իր վերտանգաւոր սլացքում։

Վառվում է պատրոյգը, կարճ, շատ կարճ, էդուարդի ձեռքում. ու յանկարծ դժոխային բոմբիւն, որոտում, դղրդում է լեռը. ձորը։ Դժոխային գործիքը խլեց, թռցրեց էդուարդի ձեռքը, գլուխը, իսկ մահացու երկաթից միայն մի փոքրիկ կտոր, վերջերում երի տասարդի եռանդով ու թափով տոգորված Քրիստափորի կրծքին չպրտեց, այն տեղ ուր մարդկային կեանքն է ամփոփված...

Էդուարդի համար մահը ակնթարթային է. բայց Քրիստափորը ապրում է մի քանի վայրկեաններ. նրա նայուածքը լուռ մելամաղձոտ, մօտալուտ մահուան, ոչնչացումի գիտակցութեամբ վարագուրված, մխլում են անհունութեան մէջ, թերեւս դէպի թշուառ երկիրը... դէպի գերի բայց հպարտ աննկուն գերբնական ճիգեր թափող Մասիսը... դէպի զաւակը... նպատակը — ապագան... ո՞վ գիտէ ուր...

Գիշեր է. երկու դիակներն էլ ընկած են մահացած իրենց տեղերում. փչում է զով քամին, տիրում է վեհ խաղաղութիւնը, և, ըստ Բօսիովի, գիշերային ոգիները, հրաշալի, գեղեցիկ, սպիտակ զգեստներով, մեղմիկ արորելով կանանչները, երգելով մօտենում են ազատութեան կուի ճամբում ընկած կարիչներին, նստում նրանց կողքին. մէկը վէրքերն է կապում, միւսը սառը ջուր սրսկում, երորդը հապճեպով մահացածների շրթերը համբուրում, և նրանց մեղմ ժպտին արժանանում։..

ՎԱՐԴՈ

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Բոլոր տիեզերքում, նոյնպէս էլ մեր երկրագնդին վրայ տիրող երկու գլխաւոր սկզբունքներ կան, մէկը՝ ամէն մի բանի մէջ կայ նպատակ, իսկ միւսը՝ ամեն մի բան ունի իրան յատուկ հետեւանքը։ Այս երկրորդ ըսկզբունքի համեմատ յաւիտենական իմաստութիւնն ասած է, թէ «ինչ որ ցանես, այն կը հնձես». կամ ինչպէս իմաստասէր երեւելի բանաստեղծ Շէլլէրն ասել է "աշխարհիս պատմութիւնը աշխարհիս դատաստանն է»։ Զէ՞ որ այսօր մեր աչքերովը տեսնում ենք թէ ի՞նչ զարհուրելի պատմական դատավճիռներ են գործադրվում Մայրագոյն Արեւելքում։ Նոյն դատավճիռներն էլ կատարւում մեր մերձակայ արեւելքում։ Մինչեն Ասիայից Թուրք ցեղերից ոմանք հազար տարի սորանից առաջ եկին իբրեւ Թուրան Իրանը կոխկոտելով անցին դէպի Փոքր Ասիա, ուր մահմէդական արաբները Բաղդադում հիմնել սարքել էին մի փառաւոր խալիֆայութիւն և ծուլութեամբ ու հեշտասիրութեամբ վայելում էին աշխարհիս զուարճութիւնները։ Թուրքը յափշտակեց Արաբի ձեռքից նորա իշխանութիւնը և հարստութիւնը և ոչ միայն այդչափ, այլ միշտ յառաջ խաղալով նուաճեց մաս առ մաս նաեւ ծոյլ ու անփոյթ Բիւզանդի կայսրութիւնը, յաղթեց ու ոտքին տակն առաւ Բուլգարիան, Սերբիան, Ռումանիան, Հունգարիան մինչեւ որ գնաց պաշարեց Աւստրիայի մայրաքաղաքը՝ Վիէննան։ Այսօր Պուտա Բէշտ գնացող ամեն մի անձ կը տեսնէ այնտեղ Գիւլ-Բաբա կոչուած կրկու մինարէներով զարդարուած գեղեցկաշէն մզկիթը իբրեւ յիշատակ և ապացոյց ժամանակով այնտեղի Թրքական գերիշխանութեան։ 400 տարի սրանից առաջ դողում էր Եւրոպան Թուրքի վախից։ Բայց ա՞յսօր։ Այսօր Ալի-Օսմանի հզօր պետութիւնը ծերացած թուլացած մերձ ի մահ եղած կորսընցընում է իր մարմնի անդամները կտոր կտոր։ Նա կորցրեց Հունգարիան, Ռումանիան, Սերբիան, Բոսնիան, Ցունաստանը, Կրիտը, Կիպրոսը, Եգիպտոսը, Բուլգարիան, եւ հիմա էլ կորցնում է Մակեդոնիան, ու շուտով էլ կը կորսնցնի Պոլիսը և նոյնիսկ Փոքր Ասիան ու վերջապէս չունչը կը փչէ։

Մենք հայերս պէտք է հասկնանք այս բանը ու ըստ այնմ վարուինք։

Ուրեմն ո՞րն է մեր խելացի վարուելու եղանակը։

Ամենատես նախախնամութիւնը հազար տարիներով պահել է մեր հայ ազգը անթիւ պատուհասների և ցաւերի մէջ մինչեւ այսօր ու ունի Աստուածային այն նախասահմանութիւնը, որ մենք ժրաջան, մտաւոր ու մարմնաւոր կերպով յառաջդիմասէր հայերս պէտք է Արեւելքի մէջ մեզ շրջապատող թմրած անկիրթ ազգերի համար բարի օրինակ և լուսատու ճրագ լինենք։

Մեր այս պատմական և բնական նպատակին հասնելու համար արդէն մենք հայերս անգիտակից բնազդումով գործում և վարվում ենք։ Ի՞նչ է պատճառը որ մեր դրացի Թուրք քուրտ, պարսիկ, չէրքէզ, լազ, ասորի և միւս ազգերը տգիտութեան մառուան գերեզմաններումը թաղուած մրափում են, իսկ մենք հայերս թէ՛ Պարսկաստանում, թէ Տաճկաստանում և թէ Կովկասում մեծից և հարուստից սկսած մինչեւ վերջի գիւղացին և աղքատ բեռնակիրը վառուած ենք այն եռանդի կրակովը, որ մեր ամեն որդիքը թէ՛ աղջիկները ինչքան կարելի է համալսարանները վերջացնեն, ամեն տեսակ գիտութիւն սովորեն, հարստանան, աշխարհիս գործելու միջոցները ձեռք անցնեն և թւով էլ աճին բազմանան։

Սակայն ինչպէս ծիծեռնակը բոյն է շինում բնազդումով առանց իմանալու թէ այդ բոյնի նպատակն ինչ է, նոյնպէս էլ մենք հայերս անգիտակցաբար գնում ենք մեր ճանապարհը լոկ բնազդումով։ Բայց որովհետեւ Աստուած մարդս անասուններից վեր դասելով չնորհել է նորան խելք ու բնականութիւն, նա էլ պէտք է իր խելքովն ու փորձառութեամբը նկրտի դէպի իր նպատակը։

Մեր վերնագիրը գրինք «Հաշտութիւն»։ Բագուայ մէջ մեծ ահռելի արիւնհեղութիւն եղաւ։ Այդ խիստ ցաւալի դէպքի արտաքին գործիքը այնտեղի Թուրքերն էին։ Արդ ի՞նչ։ Պէ՞տք է որ մենք հայերս Թուրքերից վրէժ առնելու համար զինուինք ու այստեղ այնտեղ Թուրքեր կոտորենք։ Եկէ՛ք լո՛ր կերպով մտածենք այս մասին նիւթի վրայ։ Եթէ այնտեղները ուր հայերը բազմութիւն են յարձակուեն Թուրքերի վրայ եւ նորանցից քիչերին կամ շատերին բռնանեն, միթէ՞ Թուրքերը այդ պատիժը կուլ կուտան ու կը մոռնան։ Երբէք։ Նորանք էլ կսկսին. ուր որ իրանք շատուր են, հայերին սպանել. և հայերն էլ կրկին Թուրքերին կը կոտորեն. և այսպէս բոլոր Կովկասի մէջ քաղաքներում, գիւղերում, փողոցներում ու ճանապարհներում, ցերեկները և գիշերները հայու և Թուրքի արիւն կը հոսի, երկու առիւծներն իրար կսպաննեն, կուտեն. կը կրծեն և կը մնայ միայն նորանց պոչերը հողի վրայ։ Եւ ով կը խնդայ ու կուրախանայ։ Մեր Թշնամին։

Սա էլ պէտք է մենք հայերս պարզ իմանանք, որ հայ ու Թուրքի մէջ տեղի ունեցած մի այդպիսի աւերիչ խռովութիւնը սոսկ ոուսաց սահմանների մէջ փակուած չի մնայ. անտարակոյս կը գանէ սոսկալի արձագանք նաեւ տաճկաստանում։ Եւրոպայի քաղաքագիտութեան տյն մասն էլ, որ յառաջդիմասէր հայերի կորուստն է փափաքում, կուրախանայ և ուզղակի ու ա՛ռ զղակի կերպով կը գրգռէ հայերին և Թուրքերին որ իրար բնաջինջ անեն։

Հասկանանք այս սոսկալի վտանգը ով հայեր, հասկանա՛նք. և ամեն կերպով աշխատինք որ Կովկասի հայերը և Թուրքերը միասին մէկտեղ ժողովուած երգում և ուխտ անեն իրար հետ հաշտուելու և հաշտութեամբ ապրելու եւ եթէ մի ագէտ գրգռուած հայ կամ Թուրք անմիտ վրէժխնդրութեամբ միւս կողմից մի անձ սպաննէ, միմիայն այդ ագէտին պատժեն և ոչ թէ ազգ ազգի դէմ կանգնեն։

Մեզ հայերիս պէտք է Թուով բազմութիւն, գիտութիւն հարստութիւն և բարուց բարեոքում։

Աբր. Ալիխանեանց

ԽԱՂԱՂԱՕՐԻ ՆԻՔՕԼԱՆ

—○○—

Օրթ-Արթուր ինկա՛ւ... հաղորդուեցաւ Թէ՝ ցարը այնքան վշտահարուած է, որ վճռած է անպայման խաղաղութիւն կայացնել։ Մակայն ատոր փոխարէն, քանի մը շաբաթ վերջ լսեցինք նոր բանակի առաքման տարաձայնութիւններ... Բաւական չէին արտաքին ոճիրներն ու նախճիրները, ականատես եղանք նաեւ յունվար 9/22ի և յաջորդական օրերու ներքին զարհուրելի կոտորածներուն։

Ամեն կողմէ տեղացին բողոք, դադարում պատերազմի և այլն, մինչեւ հասաւ Մուքէնի և Դիէ Լինկի կրաւումը, որոնց մէջ երկուստեք տարուած զոհերը 100.00 ը կանցնին եւ ուր ռուսական բանակը, բացի հազարաւոր վիրաւորներէ և սպաննուածներէ, տուաւ ճարոնական բանակին ձեռքը ահագին քանակութեամբ ռազմամթերքի հետ միասին՝ առաւել քան 40000 գերի. կորուստներ, որ եթէ բոպէ մը միայն լրջօրէն խորհինք, պիտի տեսնենք թէ այնքան ալ թեթեւ բաներ չեն՝ մանաւանդ՝ ռուսականին նման պարտուած ու ամօթհարուած բանակի մը համար...

Հեռագիրները հաղորդեցին ցարին վիճակը—յուսահատ ընկճուած, գետնահար. զրկելով ինքզինքը սնունդէ, ամեն տեսակ հաճոյքէ. ծանր մտատանջութեանց տակ ճնշուած և... անդառնալի որոշման մէջ՝ խաղաղութեան բանակցութիւններ սկսելու Միքատոյի հետ...

Այս բոլորը կարդացինք, լսեցինք և յուսացինք՝. ահա՛ դեռ երեկուան հեռագիրը, խորտակելով այդ բոլորը կը յայտարարէ թէ՝ ցարը ստորագրած է հրովարտակ մը՝ Մանչուրիա զրկուելու նոր զինուորահատաքի համար՝ հինգ նահանգներու մէջ—Վարշավա, Քիէվ, Մոսկուա, Վլորոնէժ և Քազան...

Ի՞նչ բան ստիպեց զինքը այսպիսի յանկարծական մտափոխութեան դիմել... Գաղտնիք մը չէ երբէք, մէկէ աւելի անգամներ ծանրացած ենք այդ խնդրին վրայ—հրէշակերպ մեծաւորներու ստիպումն ու բռնադատումը—այո՛ բռնադատում իր վրայ՝ հակառակ ինքնին ինքնավար բռնապետ մը ճանչցուած ըլլալուն, և եթէ խորհինք թէ այդ ստորագրումը բոլորովին յօժարակամ էր. թերեւս սխալինք, հոգ չէ թէ ըլլայ ան մարդկութիւնեան առաջ ստոր ու անպիտան գործ մը — որովհետեւ Մարիոնէդ մըն է ան. Վլատիմիրներու, Ալէքսիաներու և նմաններու ձեռքը...

Եւ ահա ասանկ մէկու մըն է որ յանձնուած է 150 միլիոն ժողովրդի մը կառավարումը, անոր դժբախտ ճակատագրին սահմանումը, անոր յոյսն ու փրկանքը, անոր ներկայ և ապագայ մարդավայել կեանքի մը բոլոր հեռապատկերները...

Պատերազմը պիտի շարունակուի՞ անպայման, ի՞նչ գնով որ ալ ըլլայ, կը պոռան ռուս աստիճանաւորները, իսկ Միքատոն, իր ճարոնական բանակին ուղղած մէկ շնորհաւորական հրովարտակով՝ գովելով հանդերձ ազնոց գերազանց արարքները, ապագային «աւելի մեծագոյն սխրանքներ» ակնկալելու բաղձանքներ կը յայտնէ...

Միեւնոյն ժամանակ Ֆրանսական ազգայնական մամուլը, իր դաշնակցին պատիւը բարձր պահելու տենդահար թափով, կը-յայտարարէ՝ որ ճարոնական յաղթութիւնները ո՛չ միայն Եւրոպայի, այլ «աշխարհի հաւասարակշռութիւնը» խախտեց ու կը թելադրէ Մ. Նահանգաց գալ եւ աջակցիլ խաղաղութեան հաշտարար գործին, սա պայմանով միայն՝ որ այդ խաղաղութիւնը Ռուսաստանի զինուորական բրէստիժը վարկաբեկող պայմաններու տակ չըլլան,— այլ համահաւասար զոհողութիւններով...

Գեղեցիկ մտածնունդ... բայց խնդիր է թէ՝ Միքատոն կը համակերպի՞ այդպիսի որոշման մը։— Ի հարկէ ո՛չ, որովհետեւ ատի, այսքան հոյակապ յաղթանակներէ վերջ այդպիսի համաձայնութիւն մը բացարձակ նախատինք մը պիտի ըլլար ամենէն աւելի Թոկոյի, Օեամայի, Նոկիի եւ Օքույի քաջայաղթ բանակներուն, որոնք պատերազմը բերին հասցուցին մինչեւ իր ներկայ շրջանին—քայլ մը միայն ասդին վերջնական պանծալի յաղթանակէն։

Ո՛չ, ռուս մեծաւորներու այս գաղտագողի թելադրանքները անհետեւանք են գլխովին ու Միքատոյի վճռական պատասխանը այսուհետեւ պիտի ըլլայ.— խաղաղութիւն առանց պայմանագրութեան, առանց ճարոնական զիջողութեան...

Մ. ՅՈԼԱԿ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան 2 փետրվար

Յունուար 27ին, հինգշաբթի օրը, մի մասնաւոր տան մէջ տեղւոյս մի խումբ սիրողներ (կանայք և տղամարդիկ խառն), յօգուտ բարեգործական նպատակի տուին մի մասնաւոր ընտանեկան երեկոյթ, բաւական հարուստ ծրագրով։ Բացի երգուած երգերից և կարդացուած ճառախօսութիւնից՝ ցուցակի վրայ նուագում էր նաեւ մի պարոն, իսկ Ֆլէյտի վրայ մի ուսուցիչ։ Հանդիսականները ցրուեցան գոհ տպաւորութեան տակ։ Այդ երեկոյթը յատկապէս աչքի էր ընկնում և եզակի խնդութիւն պատճառում իւրաքանչիւր հանդիսականին նրա համար, որովհետեւ թէհրանում առաջին անգամն է մի գործ, մի սիրելի ու պաշտելի ձեռնարկութիւն, որ առաջ է ընթանում մասնակցութեամբ երկու սեռերի նախաձեռնողների. այո, եզակի է մեզ մօտ այդ գործը իր տեսակների մէջ որովհետեւ իգական սեռի կողմից առաջին անգամն է սկզբէս միահամուռ ձգտումն նկատում ասիական սնապաշտութիւն և հայեացքների մռայլ անթափանց քողը պատռելու։ Ուստի նախ ցանկանք նրանց եռանդ, թափ, կրակ և ապա սպասենք յաջող ու բեղմնաւոր գործունէութիւն։ Երեկոյթները նախաձեռնողներին այսու յայտնում ենք մեր անկեղծ և խորին շնորհակալիքը։

Ի դէպ յիշատակենք այստեղ և տեղւոյս ուսուցչական խմբի զանազան «բարեհաճ մասնակցութիւններով» տուած «Ոճրագործի ընտանիքը» ներկայացումը, որի մէջ յատկապէս աչքի էին ընկնում իւրեանց կոմիկ-միմիկայով (դրամա և կոմիկութիւն) յայտնի ողբերգակ պարոնները...

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

—⁂—

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎԱ

—⁂—

(Ծնախմբութիւն)

—)o(—

(Դրագիտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարտարնակ հանարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

17

Դ.

(Շար. նախորդիւն)

Տղամարդիկը լռում էին։

Բուլուռնը հաղաց եւ սկսեց ցած ձայնով, կարծես ներողութիւն խնդրելով, բայց հակառակ համոզման.

—Բայց եթէ ես չեմ կարողանում ըմբռնել այդ հոգեկան եղբայրութիւնը, որը դուք ստեղծում էք ձեր շուրջը։ Ես անկարող եմ երեւակայել սէր դէպի կին առանց սեռական զգացումի. թող այդ ոչ բոլորովին սեռական զգացում լինի։ Այդ խհարկ է վայրենութիւն է, անճոռնիութիւն, գէշ է։ Բայց որ կարելի է կնոջ հոգով սիրել եւ չուզենալ նրա մարմնին տիրապետել, ներեցէք. դրան իմ խելքս չէ հասնում, ինչպէս եւ չեմ կարող հաւատալ որ իր մարմինը սիրած մարդին խնայողը կինը կարող է հոգով սիրել։ Դրանից կարելի է եզրակացնել որ դուք ձեր հոգին աւելի գիւրութեամբ էք յանձնում ուրիշին եւ հոգեկան կապերը աւելի քիչ էք գնահատում քան թէ մարմնի սովորութիւնները եւ տրամադրութիւնները։

Վիկտորիա Պավլովնան պատասխանեց։

—Դուք սխալվում էք, Բուրունիկ. ես ոչ միայն այդպիսի անմիտ գնահատում չեմ անում, այլ սիրային խնդիրներում ես բոլորովին հաշի չեմ առնում այն ինչ որ հրամայում է մարմինը։

—Էհ ուրեմն այդ ձեր բախտն է որ մի այդպիսի անկիրք հրէշ էք ծնվել, բարկութեամբ միջամտեց Բուրունը։

—Բայց ես առանց կրքի չեմ. ջրդայնօրէն պատասխանեց Վիկտորիան. ինչ է այդ դուք բոլորդ էլ պարոններ, պարծենում էք ձեր կիրքերով. կարծես ինչ որ ազնուութիւններով. եւ վեհութիւններով։ Միխիթարվեցէք Բուրուն, ես շատ լաւ գիտեմ թէ ինչպէս աչքերը պղտորվում են համբոյրի տակ, թէ ինչպէս մարմինը փչաքաղվում է մի ձեռք սեղմումից, թէ ինչպէս մարդ ամբողջովին ջերմութեան մէջ է ընկնում հաճելի մարդին մտաբերած պարագային։ Եւ ահա այստեղ է որ պէտք է գիտենալ սեռական զգացումը զատել սիրելուց։ Դրանք երկու բոլորովին իրար հակառակ ուժեր են։ Իսկ ես մտածում եմ որ նոյնիսկ իրարու թշնամի ուժեր։ Ես ձեզնից թագնվելու պէտք չունեմ։ Ես առանց կրքի չեմ ինչպէս երեւակայում են Բուրունը եւ իր նմանները եւ սուրբ էլ չեմ ինչպէս երեւակայում են Կլէպովը, Շելէպովը եւ ուրիշները, որոնք կախից այրվելով, ջուրն էլ են փչում։ Միայն այդ կրքոտութիւնից. այդ նկարագրից, որով դուք պարծենում էք, ես ամաչում եմ. եւ իմ կամքիս ամբողջ ուժովը 27 կողպէկների տակ եմ գոցում. ու հեքիաթի թագուհու նման, բանալիները նետում շատ հեռուն։ Որովհետեւ հէնց որ ես մի փոքրիկ քայլ անեմ դէպի այն կողմը եւ մենք ոչ թէ հոգեկան եղբայրութիւն կունենանք այլ անբարոյականութեան մրցում։

Եւ մեր հոգեկան եղբայրութիւնը, դուք լաւ ասացիք Բուրուն, ես երբէք սիրաբանութիւններով չեմ սրբագրի։

Մրցման միջոցին մէկը կը տիրապետի ինձ. միւսը քիթը կախ կը մնայ։ Որովհետեւ ես ոչ Մեսպալինա եմ եւ ոչ էլ Ցէրցէա. ինչպէս մեծարրում են ինձ ձեր տիկինները։

Ես մի անգամ կարդացի մի պատմական ակնարկ. վերջին Թափարական ասպետ Ուլրիխ Ֆոն Լիխտէնշտէյնի մասին։ Այդ մարդը յիմար բայց մեծ սիրոյ մարդ է եղել։ Եւ ահա նա, ինչպէս եւ ես ձեր խոնարհ աղախինը. ոչ շատ խելացի, երբէք չի կարողացել հաշվել այն մտքի հետ թէ՝ սէրը եւ սեռական զգացումը միեւնոյն բաներն են։ Եւ դրա համար իրեն յաւիտենապէս սիրած կընոջ նա երբէք չէ տիրացել եւ շատ պէտք է զղջար ու վշտանար եթէ այդ կինը յանկարծակի թուլութիւն ցոյց տար նրա սրոցերը պատկելու համար։ Նոյն միջոցին նոյն մարդը ամուսնացած էր եւ ունէր բազմաթիւ երեխաներ, որովհետեւ կինը առել էր հէնց նրա համար, որ իր հոգուն չը տիրապետէր։ Այդպէսով նա իր սէրը մի դրամատան մէջ էր պահ տուել, իսկ սերնդի շարունակութիւնը ուրիշ։ Տեսնում էք Բուրունիկ, ուրեմն տղամարդիկ էլ կան իմ հայեացքներով։

—Միայն այդ կասկածելի է մթմրթաց Զվերինցեւը։

—Ի՞նչ։

—Այն որ ասպետը կը վշտանար, եթէ իր Դուլցինէն վզովը կախվէր։

—Դուք կարծում էք. երեւակայեցէք Միխայիլ Աւգուստովիչ, հէնց

Միծաղելին այն է, որ մենք սոյն խոսքերով ծաղրուս ենք նրանց, նախապէս ի հարկէ համոզուած լինելով, որ Թէհրանի բեմի վրայ օրպէս սիրողների խաղ անկարելի է նրանց խաղացածից աւելին ակնկալել՝ իսկ նրանք խորապէս հուատացած են որ հէնց նոր են եկել Պետերբուրգի մեծ թաարոնի բեմից և վազել Թէհրան....

Գոնէ մենք խորհուրդ կտայինք նրանց որ կարողանային հանդիսականներին դրաւել և ոչ թէ իրենց հպարտ ինքնահաւան դիրք բռնելովը խրատեցնէին ժողովրդին ու փայլեցնէին դահլիճը իւր ճոխ դատարկութեամբ. Ցանկանում ենք նոյնպէս յաջողութիւն ուսուցչական խմբին։

ԾԵՐՈՒԿ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍԼԻՎԷՆ. 11 Մարտ

Փետրուար 24ին տեղւոյս Օրբ. Յատեփանոս եկեղեցւոյն մէջ տօնուեցաւ Վարդանանց յիշատակը։ Ցետ աւարտման եկեղեցւոյ ազգ. երկսեռ վարժարանին մէջ երկսեռ աշակերտները ճառախօսեցին փոքրիկ ոտանաւորներ։ Ցետ ճառախօսութեանց բեմ ելաւ տնօրէն Տ. Արմէն Շիտանեան որ բաւական ուրախ խուզարկութիւններ ձգեց ժողովրդի սրտին մէջ մէկ խօսքով արտասանեց Վարդանի քաջագործութիւնները, Վասակայ մատնիչութիւնը, եւ պարսիկներու չարագործութիւնները Հայաստանի մէջ. ճառախօսութիւնը վերջացաւ գեղեցիկ երգերով։ Ժողովուրդը մեկնեցաւ վարժարանէն ուրախ սրտով և կսպասէին երեկոյեան ներկայացման.

Այն օր բոլոր հայ ժողովուրդը խանութին գոցած էին և ամեն հայ որ հայ անունը կը կրէր փութացած էր պատարագի արարողութեան և հանդէսին ներկայ գտնուիլ։ գիտէինք թէ ամեն հայու վրայ պարտականութիւն մը դրուած էր։

Երեկոյեան ժամերը կը մօտենային կամաց կամաց, և ահա հասաւ ժամանակը։

Ժամը 9ն էր. խուռն բազմութիւն լեցուած էր ազգային վարժարանին մէջ։ Ցանկարծ բացուեցաւ վարագոյրը, ինչպէս Ցաղկերտը բաղմած էր իր գահին վրայ և հայոց նախարարները առջեւը կը հրամայէր որ իրենց կրօնքն ուրանան և ընդունին արեւապաշտութիւնը և ահա բացուեցաւ երկրորդ, երրորդ և չորրորդ վարագոյրները. ներկայացումը պատրաստուած էր յաջող կերպով։ Վերջացաւ ներկայացումը։ Եւ ահա բեմ ելաւ Պ. Թորոս Մկրտիչեան խրախուսեց ժողովուրդը իր սիրուն խօսուածքովը, ընդարձակեց, հայկական յեղափոխութիւնը. անցաւ Սլիվէնի երիտասարդութեան վրայօք պատմեց թէ երիտասարդութիւնն է որ ժողովուրդը կը զարգացնէ և նախ պէտքութիւն մը ունի ընթերցարանի մը որ փտացած երիտասարդութիւնը զարգացման գաղափարը ստանայ. բայց ուր է այս բառերը լսողը. չկայ Սլիվէնի երիտասարդութեան մէջ այս գաղափարը. ճառախօսը վերջացուց իր ճառախօսութիւնը։ Բեմ ելաւ Տ. Միհրան Համամճեան, իր համեստ խօսուածքներովը ժողովրդին սիրտը գրաւեց, հասկցուց ժողովրդին թէ եկեղեցիին և վարժարանին այնպիսի խնամք տանելու են։ ինչպէս մարդ մը կը խնամէ ինքզինքը։ Ժամը գիշերուան 1ն էր երբ ժողովուրդը մեկնեցաւ ազգային սրահէն։

*

Երկար ժամանակէ ի վեր պէտքութիւն մը ունէինք Տ. Յարութիւն Պողոսեանի մը պատ. թաղ. խորհրդոյ ատենապետ. և ահա հասաւ ժամանակը, և Տ. Յարութիւն Պողոսեանը ընտրուեցաւ պատ. թաղ. խորհրդոյ ատենապետ, շատ ուրախալի է ըսել որ վ. Յարութիւն Պողոսեանը չխնայեց իր ջանքերը, վարժարանին և եկեղեցւոյ, աշխատեցաւ այն, չափ որ վերջապէս ընդունեցաւ ժողովրդէն այս անունը «արժանի է այս մարդը ատենապետութեան մը»։

Տիար Պողոսեանը և տնօրէն Արմէն Շիտանեանին հետ ձեռք ձեռքի տուած, աշխատեցան ազգային երկսեռ մանուկները առաջին անգամ ներկայացում տալ «Հայաստանի յեղափոխութիւնը» և երկրորդ անգամ Վարդանանց պատերազմը։

Եւ մենք պէտք է շնորհակալութիւն յայտնենք այս անձերուն որով օգտուեցաւ թէ ազգը և թէ ազգային մանուկները։

Միհրան Ա. Խաչատուրեան

ՖԻԼԻՊԷ

Գրասիրաց Եղբայրութիւն

(Հաստատուած 1883ին)

—o—

Ընթերցարանը բաց է բոլոր գիշերները, կիրակի և շաբաթի գիշերներէ զատ։

Կիրակի բաց է ամբողջ օրը, տօներուն կէս օրէն ետքը միայն։

Մատենադարանէն գիրք կը տրուի կիրակի առաւօտները։

Հայ հեղինակներէ շնորհակալութեամբ կստացուին նուէրներ։

Վարչութիւն

ՍՐԱՀ ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՍԶԳԱՑԻՆ ԵՐԵԿՈՅԹ

Ի նպաստ

«ՀԱՅԿԱԿԱՆ» ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ

Մարտ 19ին, այս գիշեր, ժամը ճիշդ 9ին, առաջնորդութեամբ պ. Վ. Պապաեանի պիտի ներկայացուի՝

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ողբերգութիւն 3 արար

Երգ և պար Օր. Քաթինայի կողմէ

և ծիծաղաշարժ զաւեշտ մը

ԿՌՈՒՆԿ

Լոյս տեսաւ «ԿՌՈՒՆԿ» գեղարուեստական (երաժշտութիւն, ճարտարապետութիւն եւն) եռամսեայ եւ պատկերազարդ հանդէսին առաջին թիւը։

«Կռունկ»ին սոյն առաջին թիւն բովանդակութիւնն է՝

այն ժամանակ հաւատացի, երբ ձեզ այդ ասպետի դերում երեւակայեցի։

—Համա կասէ՛ք։

—Ճիշտ։ Եթէ ես հիմա ականջիդ փսփսամ Միշէլ, բաւ է, ինչ որ կուրտվեցինք. մի քիչ ուշ եկէք ինձ մօտ, ես ձերն եմ։

Այդ ձեզ երջանկութիւն կը տա՞յ։ Ի հարկէ սկզբում կուրախանաք.. կը կարմրիք... բայց յետոյ եւ կը տրխրէք. պարապ եւ դատարկ կերեւայ ամէն ինչ, մտածելով թէ մեր մէջ վեց տարի չարունակ ինչ որ փայլուն, սիրելի, մի առանձին բան կար, որ ես երբէք ուրիշ կանանց հետ չէի զգացել. իսկ հիմա այդ լուսաւորը խաւարեց, նա էլ ինձ համար նոյն է, ինչ որ ուրիշ կիները եւ ես էլ նրա համար վայրկեանական քմահաճոյքի մի սիրեկան։ Էլ ո՞ւր կարող եմ ես հոգիս միխթարել, քանի որ մեր մէջ ստեղծվեց նոյնը ինչ որ իմ եւ կալուածներիս տէր կնոջս միջեւ։ Ու սիրտդ պիտի կծկվէր. որ մենք այնքան իրար լաւ ճանաչում էինք, սիրում էինք իրար իբրեւ երկու մարդիկ, եւ ահա մի վայրկեանում այդ փայլուն հաւասարութիւնը ոչնչացրինք եւ մարդ ու կնիկ դարձանք։

Ու Վիկտորիան ծիծաղեց։

—Չէ, չէ։ Պապա՛ այն ինչ որ ես ասում եմ ասպետի եւ քո մասին. այդ սուտ է... բայց այն ճշմարիտ է պարոն, որ ես ճանաչում եմ այդպիսի մի ասպետի, որը ինձնից հրաժարվեց։ Թէ ո՞վ է այդ մարդը ես ձեզ չեմ ասի։ Նա ձեզ ամէնքիդ էլ ծանօթ է բացի Ալեքսանդր Վալէնտինովիչից. իսկ դուք այր մարդիկդ այդպիսի պարագաներում շատ յիմարօրէն ծաղրող էք... իսկոյն Ցովսէփի զեղեցկին եւ Պետափրէսի կնոջը մէջ տեղ կը հանէք։ Իսկ այստեղ ընդհակառակը այդ տեսակ բան չը կար Ցովսէփը միշտ տանջվում էր նպատակին հասնելու համար իսկ Պետափրէսի կինը ասում էր, հեռացիր անամօթ։ Բայց գիտէի եւ զգում էի որ պարոնը լրջօրէն չէր տանջվում, այլ ձեւակերպութիւն, նա խապաշարված լինելով, որ առանց այդ տեսակ ձգտումների սիրային տանջանքը լիակատար չէ. դրա համար էլ փորձեցի. լաւ ասում եմ եկէք այսինչ տեղը, ձերն եմ. ամբողջ կեանքովս չեմ խոստանում այլ մինչեւ ինձ ճանձրացնէք։ Այդպիսի բան չէր սպասում, չարեց. բայց վերջը ուշքի եկաւ, մի քանի լաւ խօսքեր արտասանեց եւ հիացած հեռացաւ։

Ցետոյ էլի վերադարձաւ մթագնած —գիտես ինչ կայ Վիկտորիա դրանից յետոյ կեանքիս մէջ ինձ համար էլ ոչ մի բաղձալի բան չի մնայ։ Էհ դուք ինձ այդպէս երդվեցիք. ուրեմն քեզ էլ չեմ բաղձալու։—Էլ ինձ բաղձալու ինչ պէտքը պէտք է ունենաք. քանի որ ես ձեր սեփականութիւնը պէտք է դառնամ։

—Բայց այդ շատ տխուր կը լինի։ Իմ կարծիքով էլ ուրախ չը պէտք է լինի... խօսեցինք, խօսեցինք եւ համաձայնութեան եկանք։ Վիկտորիա, խնդրում է նա, քո խոստումը չեղած համարենք։ ինչպէս իմ կողմից բռնութեամբ կորզած։ Իսկ իմ յիմարութեան համար ներիր ինձ։ Ես չափից աւելի եմ գնահատում մեր բարեկամութիւնը, որ կարողանամ բաժանվել։ Չէ պապ եթէ ասպետդ քեզ ճիշդ չէ երեւում, դու սլաւոնական եղբայրանալը յիշիր։ Տես ուր է սէրը. իրար եղբայր եւ քոյր ճանաչողների մէջ. եւ զօրեղ է նա, որովհետեւ սեռական զգացմունք չը կայ. զօրեղ է քան ամուսնական կապերը։

Բարի գիշեր, ուշ է. քնանալ եմ ուզում։

Նա արագութեամբ մեր ձեռքերը սեղմեց եւ մթութեան մէջ անհետացաւ։

—Վիկտորիա Պավլովնա, կանչեց Բուրուն։

—Ի՞նչ կայ։

—Այդ ամէնը ձեր տէօրիայի մէջ լաւ է. սէրը առանձին, սեռական զգացումը առանձին. բայց գործնականի մէջ ինչպէ՞ս է։

—Էհ, սիրելի Բուրուն այդ ձեզնում այր մարդու կեղծաւորութիւնն է աղաղակում։ Եթէ այր մարդու հասար գործնական բաժանումը դժւար լինէր այն ժամանակ ոչխարհում հանրային կիներ պահող հիմնարկութիւնները գոյութիւն չէին ունենայ եւ ոչ էլ հասարակական նկարագրի զոհեր ամուսնը...

—Լաւ այդպէս այր մարդիկ, իսկ կիները. չարութեամբ եւ խայթիչ կերպով ճչաց Բուրուն։

—Շատ առաջ մի գնա... բարկացած մռնչեց Միխայիլ Ավդուստովիչը։ իսկ իշխանը հիւանդագին հառաչեց.

—Ինչպէ՞ս դուք այդէս անյարմար

—Իսկ դուք ամուսնկանների մասին կարդացե՞լ էք։

—Այո, ի հարկէ...

—Էհ, նրանք չէ՞ որ կիներ էին. եւ գնաց։

Մենք բոլորս երկար լուռ էինք։ Իշխանը ջղայնօրէն չրջագայում էր ճեմելիքում. Միխայիլ Ավդուստովիչ բարկացած փնչում էր։ Բուրունը ծնկներին յենված դանդաղօրէն օրօրվում էր։

(Շարունակելի)

—❁❁—

Ինդագիր . . . Գ. Փրոֆ. Գալֆեան Երգ (Կռունկ) . . . . . .

Տ. Վէնսան տ'Էնտի կը հովանաւորէ «Կռունկ»ը . . . . . .

Հայ ժողովուրդն և իր գեղարուեստական դերը . . . . . .

Հարց Ս. Ինդգեան (անսկիզբն էակից եւն) . . . . . .

Տ. Գոնսթան Մուայօ կը հովանաւորէ «Կռունկ»ը

«Խազ»երը . . . . Սա Դա-նա Բարիզի Հայ յկեցեցին . Ա. Կիլպէր Սէզար Ֆրանք . . . Վէնսան տ'Էնտի Նուաց (դաշնակի) . . . Սէզար Ֆրանք Տաճկ. թատրոնը . . . . Ա. Թալասս Երգ մանկական . . Գ. Փարթամեան Մ. Մաքսուտեան (ողբ. գերաս.) Գ. Փ. Սքօլա Քանթօրում . . . . . X. X. X.

«Կռունկ»ը քաղաքականութեամբ չի զբաղիր : «Կռունկ»ին նպատակն է

1. Հայ արուեստը ճանչցնել հայուն
2. Եւրոպ. արուեստը ճանչցնել հայուն
3. Հայ արուեստը ճանչցնել Եւրոպային

«Կռունկ»ը, հետեւաբար երկու լեզու կը խօսի՝ Հայերէն ու Ֆրանսերէն : «Կռունկ»ը հայ եւ օտար աշխատակիցներ կունենայ :

«Կռունկ»ը Ֆրանսացի ականաւոր անձնաւորութեանց հովանաւորութիւնը կը վայելէ : «Կռունկ»ն իրեն պարտ կը համարի բանալ իր էջերը, անխտիր, այն ամէն յօդուածներու եւ աշխատութեանց համար, որոնք Հայուն գեղարուեստական յատկութիւններն ի վեր հանելու ձգտումով ներշնչուած կըլլան :

«Կռունկ»ին պարտին բաժանորդագրուիլ այն ամէն հայերը որոնք կուզեն իրենք ալ իրենց կարգին նպաստել Հայ Վերածնութեան փբթումին նուիրուած Հեռնարկի մը, եւ որոնք կուզեն գեղարուեստի երփներանգ դրօշին վրայէն ընդնշմարել գէթ մեր բարոյական ազատագրումին նախաշաւիղները :

«Կռունկ»էն մէկ օրինակ, իբր նմուշ, ձրի պիտի ղրկուի ամէն անոնց որ կը հաճին մեզ իմացնել իրենց հասցէն :

„Կռունկ"ին տարեկան բաժանորդագինն է՝

Եւրոպայի համար	10 ֆրանք
Ամերիկայի համար	2 տոլար
Ռուսիոյ համար	4 ռուբլի
Տաճկաստանի համար	50 ղրշ.

Դրամ եւն ղրկել հետեւեալ հասցէով՝

Proff-Kalfaian Directeur Redacteur du GROUNG 159 Boulevard Montparnasse Paris

ՌՈՒՍԻՈՅ ՄԱՍԻՆ

«Ֆանոը կը հաղորդէ որ Մարէշալ Օնման, թղթակցի մը հետ տեսնուելով, հետեւեալները ըսած է :

«Անձամբ ես ռուսները շատ կը յարգեմ, մանաւանդ զինուորները : Անոնք լաւ կը կռուին : Զինաստանի հետ պատերազմած միջոցներուս ես երբ հրամանատար էի, մէկ զօրաբաժինով մը Բորթ Արթուրը հէնգ ժամուան մէջ գրաւեցինք : Այս անգամ հետեւանքը կը ցուցնէ որ ռուսներու և չինացիներու մէջեւ շատ մեծ տարբերութիւն կայ, և մեր զօրքերն ու սպաները իրենց պարտականութիւնը կատարեցին ինչպէս որ կսպասէինք»։

* * *

Գերմանական կարեւոր թերթի մը թղթակիցն հետեւեալը կը հաղորդէ Բեթերսպուրկէն :

«Բարձրաստիճան անձ մը որ շատ կը յաճախէ պալատ, զիս վստահեցուց որ ցարը հաշտութիւն չի ուզեր այլ անպայման կուզէ որ պատերազմը շարունակուի մինչեւ վերջը : Այս պարագաներու մէջ ինչ տեսակ հաշտութիւն ալ որ կայանայ Ռուսիոյ համար ամօթալի պիտի ըլլայ :

Գալիք շարաթներու մէջ հազիւ Ռուսիա կարենայ հասկնալ թէ Մուքտէնի սարսափելի պարտումէն վերջը որչափ զօրք ողջ մնացեր է : Սպասյակոյոը մինչեւ օրս այդ մասին ճիշդ տեղեկութիւն չունի : Մինչեւ որ մենք չիմանանք մեր ողջ պրծած զինուորներուն թիւը չի պիտի կարենանք որոշել պատերազմը պիտի շարունակուի թէ ոչ :

Երբէք Ռուսիան հաշտութիւն չի կոյացնէր Ճաբոնիայի ուզած պայմաններովը : Մենք երբէք չենք համաձայնիր Ճաբոնի վճարել կէս միլիառ ռուպլի պատերազմական տուգանք : Մենք երբէք Ճաբոնի չենք զիջանիր Սախալին կղզին ամբողջ և ոչ ալ կը հանդուրժենք որ Ճաբոնը խառնուի մեր Խաղաղական Ովկիանոսի նաւատորմիղի ուժեղացման չափին : Ռուսիան դեռ այնքան թոյլ չէ որ ստիպուած ըլլայ ամէն տեսակ պայմանով հաշտութիւն կնքել»։

Պէտք է գիտնալ որ միայն դեր մանացիք են որ կուզեն ռուսները պատերազմը շարունակեն որովհետեւ անոնց հաշուոյն կուգայ Ռուսիոյ պէս վտանգաւոր դրացիի մը թուլացումը :

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Երեք չորս օր առաջ Ֆրանսայի Այիին քաղաքին մէջ 78 տարեկան հասակում հոչակաւոր, պատանիների և մանուկների երեւակայութիւնը դէպի մաքուր ուղղութիւն մղող հոչակաւոր վիպասան Ժիւլ Վէրն :

* * *

Ֆրանսական կարտինալներէն հինգ հոգի նամակ մը ղրկած են նախագահ Լուպէի, որուն մէջ կը փաստաբանեն «Քօնքօրտատ»ը : այսինքն Պապին հետ կառավարութեան կնքած համաձայնագիրը, աւելցնելով որ Ֆրանսան չի ուզեր ոչ քաղաքական և ոչ կրօնական մեծ յուզումներ : Եկեղեցին պետութենէն բաժնելու որոշման առթիւ, կարտինալները կը յայտարարեն որ այդ քայլը անպատճառ կրօնական հալածանքներ պիտի սկսէ որը բոլորովին ցանկալի չէ ժողովուրդին :

* * *

Օրլէանի դուքսը նորէն հրապարակ ելեր է շրջաբերականով մը : Այդ շրջաբերականով Ֆրանսական գահին թիկնածուն հետեւեալը կըսէ . «Հինգ տարիէ ի վեր մեր հայրենիքին դժբաղդութիւնները կրկնապատկուած են և իմ մէջս վշտի հետ միասին ուժեղցուցած պարտականութեան գիտակցութիւնը : Այժմ աւելի ես հասարակապետական մոլորման պէտք է հակադրել միապետական ճշմարտութիւնը. հասարակապետութիւնը առանց գլուխի դիակ մըն է . ամէն մարդ այդ կը գիտակցի ցաւով : Ժողովուրդին բնազդը կուզէ պետութեան գլուխ . բայց կը գտնայ թոյլ նախագահ մը, երեսփոխանական ժողովոյ յաւիտենական ստրուկ մը, ինչպէս եւ նախարարներու և կոմիտէներու : Միայն թագաւոր մը կրնայ արդարութեան դարձնել իր օգտակարութիւնը և արժանիքը»։

Ու այսպէս զրոյցներով, իշխանը Ֆրանսացիներուն շատ մը բաներ կը խոստանայ երբ գահը բարձրացնեն զինքը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

«Ֆրանկ. Ցայթ.» կը հաղորդէ որ Թուրք թերթերու գրածներու համեմատ Թուրք պուլկարական յարաբերութիւնները հետզհետէ կը լարուին : Նկատողութեան արժանի է որ Բ. դուռը կատարեալ ապատութիւն տուած է Թուրք լրագիրներուն Պուլկարիոյ մասին ամենակծու լեզուով գրելու :

—Մարտ 17ին Պոլսէն կը հեռագրեն որ յոյն հրոսախումբերը քաջալերուած Թուրք իշխանութենէն աներեւակայելի յանդգնութեամբ Մակեդոնիա կը խուժեն և նոյն իսկ տինամիտ կը գործածեն պուլկար խաղաղ ժողովրդին և հրոսախմբերուն դէմ։

—Սուլթանական իրատէով մը յունաց պատրիարքին կարգօնուի իր ուզած ձեւովը վարուիլ ըմբոստացած սինոդական եպիսկոպոսներուն հետ :

—Պոլսէն փախած պալատական Արիֆ պէյը կը պահանջէ որ իրեն տրուի Պրիւքսէլի դեսպանական պաշտօնը : Իսկ Ահմէտ և Միղդա փաշաները որոնք նոյնպէս Պոլսէն փախած են կը փափագին զինուորական կցորդներ նշանակուիլ եւրոպական թիւրք դեսպաններու քով :

— Ֆրանսայի հետ կնքուելիք փոխադրութեան գիրը արդէն ստորագրուած է : Ֆրանսական դեսպան Քօնսթանը իր բոլոր պահանջներուն գոհացում ստացած է .

ՌՈՒՍԻԱ

Սալթայի մէջ տեղի ունեցած խռովութիւններու ատեն այրած է ցարին պալատը :

— Պաքուի մէջ եօթ հոգի ատրճանակի հարուածներով սպաններ են ճանտարմաներու սպայ մը և ոստիկան մը :

ԿՐԷՏԷ

Կրէտէի ժողովուրդը ապստամբեր է իշխան Եորկիին դէմ : Իշխանին կայութիւնը խաղտուած կը համարուի :

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բեթերսպուրկէ մարտ 17ին կը հեռագրեն որ լաւատեղեակ շրջանակներուն մէջ կը հերքեն անգլիական լրագիրներու մէջ հաշտութեան մասին տարածուած լուրերը :

-Եօթը ժէնէրալէ և 2 ամիրալէ բաղկացած յանձնախումբի մը յանձնուած է քննել Բորթ Արթուրի անձնատուութեան խնդիրը և եթէ յանձնախումբը սխալներ գտնայ, այն ժամանակ է որ մեղաւորները զինուորական դատարանի պիտի յանձնուին :

— Թոքիոյէ „Սլօվօ" թերթը կիմանայ՝ որ Ռուսիան չորրորդ նաւաբաժին մըն ալ կը կազմակերպէ. շատ զօրաւոր.Մ. Արեւելք ղրկելու համար :

— Մարտ 17ին զօրավար Լինէվիչ ցարին կը հեռագրէ որ երկու կռուող զօրաբանակներու կացութեան մէջ վերջին օրերս ոչ մէկ փոփոխութիւն եղած չէ :

— Թոքիոյէն կը հեռագրեն որ Մուքտէնի քով գերի բռնուած ռուս զօրքերէն 20000ը արդէն Ճաբոնիա հասած են : Լրացուցիչ զեկուցիներու համաձայն ճաբոնացիներու ընդհանուր կորուստը Մուքտէնի ճակատամարտին մէջ 57000ի կը հասնի :

— Պալթիկեան նաւատորմիղը Մատակասկարի ջուրերէն հեռացեր է և չը գիտցուիր թէ ուր :

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность" Варна